

**ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ
ԱՆՁԻ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ՎԵՐԱԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ**

Հոդվածում քննարկվում է մասնագիտության փոփոխության (մասնագիտական կարգավիճակի անկում՝ վարընթաց սոցիալական շարժունության արդյունքում) պայմաններում անձի հարմարվողականության առանձնահատկությունները և մասնագիտական վերակողմնորոշման միտումները: Արժեքային ոլորտի աղքատացման արդյունքում նկատվում է նախկին մասնագետի հարմարվողականության ցածր մակարդակ, ուստի հասուն անձի վերահարմարման ուղիներից է մասնագիտական վերակողմնորոշման արդյունավետ կազմակերպումը, որը բացի անձի հոգեբանական պատրաստականությունից՝ ենթադրում է նաև սոցիալական հոգածություն:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. սոցիալական վարընթաց շարժունություն, մասնագիտական վերակողմնորոշում, հարմարում, սոցիալ-հոգեբանական հարմարում, մասնագիտական հարմարում, հարմարվողականություն, հարմարման ռեսուրս, հարմարման արժեքներ, վերահարմարում:

Հասարակության զարգացման ներկայիս փուլը բնորոշվում է զարգացման արագ տեմպերով, շարժունությամբ, ինչը արտահայտվում է կենսագործունեության բոլոր ոլորտներում սոցիալական, քաղաքական, տնտեսական, հոգեբանական: Նման շարժընթաց նկատվում

է մասնագիտական գործունեության ոլորտում՝ խարխալելով մասնագիտական աստիճանակարգը: Տեղ է գտնում սոցիալական վարընթաց շարժունությունը, ինչի վեկտորը մասնագիտական կարգավիճակի փոփոխությունն է (տվյալ դեպքում՝ անկումը), իսկ արդյունքում՝ անձի կողմից սոցիալական կառույցում ավելի ցածր կարգավիճակի ձեռք բերումը կամ սոցիալական կարգավիճակի կորուստը: Սոցիալական շարժունությունը մարդկանց շարժումն է մի խմբից դեպի մյուսը, որը կարող է կապված չլինել համակարգի կառուցվածքային փոփոխությունների հետ: Վարընթաց ուղղվածության դեպքում մարդը շարժվում է իր նախկին կարգավիճակից ավելի ցածր դիրքեր (օրինակ՝ մարզիկը դառնում է հանցավոր խմբի անդամ, անհատը յուրացնում է ցածրակարգ արժեքներ ու դիրքորոշումներ, բարձր որակավորում ունեցող մասնագետը կատարում է ցածր որակավորում պահանջվող աշխատանք և այլն), իսկ վերընթացի դեպքում՝ մարդը ձգտում է բարելավել իր սոցիալական կարգավիճակը, ավելի բարձր տեղեր զբաղեցնել սոցիալական աստիճանակարգում (օրինակ՝ առևտրականը դառնում է գործարար, պատգամավոր կամ նախարար) [1, 41,42]:

Վ. Տոլոչեկը գտնում է, որ այլ սոցիալական կարգավիճակ, ինքնագնահատական, ինքնավերաբերմունք, ինքնաընկալում ունեն մարդիկ, ովքեր

աշխատում են իրենց ընտրած մասնագիտությամբ և մարդիկ, որոնց աշխատանքը չի համապատասխանում իրենց կրթությանը, ցանկությանը, կոչմանը, ինչպես նաև մարդիկ, որոնք ինչ-որ պատճառներով զրկված են աշխատելու հնարավորությունից, հարկադրված են լինել գործազուրկ: Մարդիկ, ովքեր երբևէ սոցիալական կառույցում գրավել են կայուն բարձր դիրք, այժմ սոցիալական վերակառուցումների հետևանքով հայտվել են ավելի ցածր սոցիալական դիրքում՝ զբաղվելով ոչ մասնագիտական գործունեությամբ, կամ դարձել են կարգազուրկ՝ մարգինալ [2;107,215]: Մասնագիտության փոփոխության իրադրությունը առաջացնում է նման պայմաններում հայտնված անձի հարմարվողականության գնահատման և մասնագիտական վերակողմնորոշման ուղիների հարցի վերլուծության անհրաժեշտություն:

Կյանքի փոփոխվող մասնավորապես մասնագիտական փոփոխվող իրականության պայմաններում գործի է դրվում հարմարման գործընթացը: Անշուշտ, «հարմարում» հասկացությունը ընդգրկում հասկացություն է, քանի որ ենթադրում է ոչ միայն անձի հոգեկանի՝ ներհոգեկան ոլորտի վերակառուցում, հարմարեցում միջավայրի պայմաններին, այլ նաև ողջ օրգանիզմի՝ ներառած նրա ֆիզիոլոգիական հակազդումները: Հարմարման տեսության մեջ իրենց լուրջ ներդրումն ունեն ռուս և արտասահմանյան մի շարք հետազոտողներ՝ Գ. Սելյե, Պ. Կ. Անխոխին, Ռ. Մ. Բաևսկի ֆ. Զ. Մեերսոն, Վ. Ժ. Կազնաչեն, Վ. Ի. Մեդվեդև, Ա. Ժ. Յուրենիչ և այլք [3; 8]: Սոցիալական միջավայրը «արտադրում է» նորմերի, արժեքների, ստանդարտների (մասնագիտական, էթիկական և այլն) պահանջների համակարգ, որում արդյունավետորեն գործառնելու համար անձը պետք է յուրացնի համապատասխան դերային նմուշներ, վարքի ձևեր, որոնք չնայած իրենց հարաբերական

կայունության, անձին մեկընդմիշտ չեն տրվում և ենթակա են փոփոխության՝ զանազան գործոնների՝ պրոբլեմային իրադարձություններ, հիասթափություններ, աշխատանքի կորուստ և այլ իրադրությունների ներգործությամբ:

Հարմարման՝ իբրև բազմաշերտ ու բազմագործառնական գործընթացի մեջ կարելի է առանձնացնել ֆիզիոլոգիական, հոգեբանական և սոցիալ-հոգեբանական կողմերը: Ֆ. Բ. Բերյոզինը առավել կարևորում է հոգեկան հարմարումը, ինչը նշանակալի չափով ազդում է մյուս մակարդակներում տեղի ունեցող հարմարման գործընթացների վրա: Հոգեկան հարմարումն ապահովում է հոգեկանի հոմեոստազը, սոցիալ-հոգեբանականը՝ սոցիալական միջավայրի հետ համարժեք փոխազդեցության կազմակերպումը, հոգեֆիզիոլոգիականը՝ հոգեֆիզիոլոգիական հարաբերակցությունների ձևավորումը և ֆիզիկական առողջությունը: Այսպիսով՝ հարմարումը երկու՝ կենսաբանական և հոգեբանական համակարգերի ամբողջություն է, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է իր ենթահամակարգերից [4, 420]: Նոր սոցիալական իրականության՝ մասնագիտության փոփոխության պայմաններում անձի հարմարվողական կարողությունների բնույթն իմաստավորելու տեսանկյունից առավել կարևոր է «սոցիալ-հոգեբանական հարմարում» հասկացության պարզաբանումը: Սոցիալ-հոգեբանական հարմարումը անձի հոգեբանական կապերի և հարաբերությունների համակարգն է, դրանց ներգրավումը համապատասխան հոգեբանական դերերի կատարման մեջ: Ընդ որում սոցիալական, մասնավորապես՝ մասնագիտական կարգավիճակի հետ նույնացումը, մասնագիտական դերի հաջող կատարումը, սոցիալական, մասնագիտական դաշտում, անձի սոցիալ-հոգեբանական հարմարման գլխավոր ցուցանիշն է: Գ. Ա. Անդրեևան դիտարկում է սոցիալ-հոգեբանական հար-

մարումը՝ իբրև անձի և սոցիալական միջավայրի փոխազդեցություն, որը բերում է անձի և խմբի արժեքների և նպատակների ճիշտ հարաբերակցությանը: Ա. Կրյաժևան նշում է, որ «սոցիալ-հոգեբանական հարմարում» հասկացությունը անխզելիորեն կապված է անձի զարգացման հետ [5]: Կենսագործունեության ընթացքում սուբյեկտի առջև ծառացող պրոբլեմային իրադրությունները թույլ են տալիս անընդհատ վերանայել սեփական արժեքները, գործադրել վարքային մարտավարություններ, իսկ կառուցողական ելքի դեպքում՝ հիմք են դառնում նրա զարգացման համար:

Ա. Ա. Նալչաջյանը տալիս է «սոցիալ-հոգեբանական հարմարում» հասկացության ավելի ընդգրկուն բնորոշում՝ փորձելով այն բնութագրել «օնտոգենետիկական սոցիալականացում» հասկացության միջոցով. «անհատի և սոցիալական միջավայրի միջև այնպիսի փոխազդեցության գործընթաց, որի ընթացքում հայտնվելով տարբեր պրոբլեմային իրադրություններում, որոնք առաջանում են միջանձնային հարաբերությունների ոլորտում՝ անհատը ձեռք է բերում սոցիալական վարքի նորմեր և նմուշներ, դիրքորոշումներ և բնավորության գծեր և դրանց բարդություններ և այլ ենթակառուցվածքներ ու առանձնահատկություններ, որոնք ամբողջությամբ վերցրած ունեն հարմարվողական բնույթ»: Սոցիալ-հոգեբանական հարմարման նման մեկնաբանությունը թույլ է տալիս ենթադրել, որ անձի արժեքախմաստային ոլորտի շարժընթացը, որը տեղ է գտնում պրոբլեմային իրադրություններում, ինչպիսին է մասնագիտության փոփոխությունը, օրինաչափ երևույթ է և ունի հարմարվողական բնույթ: Սոցիալ-հոգեբանական հարմարման գործընթացի միջուկը, որն ապահովում է բոլոր տարրերի իրար միջև փոխազդեցությունը, ինչպես նաև համակարգի փոխազդեցությունը սոցիալական միջավայրի հետ, արժեքային

կողմնորոշումներն են, որոնք՝ իբրև գիտակցության կայուն կազմավորումներ, աշխարհայացքի իմաստային բաղադրիչներ, պայմանավորում են պահանջմունքների և հետաքրքրությունների կայուն ուղղվածությունը, վարքի հետևողականությունը: Անհատական պահանջմունքների և սոցիալական արժեքների բախումը, որպես կանոն, բերում է անձի սոցիալ-հոգեբանական հարմարման խախտմանը [5, 12–22]: Մասնագիտական կարգավիճակի հարկադիր փոփոխությունը ընթանում է, առաջին հերթին, անձի արժեքային ոլորտի վերակառուցմամբ, որի ուղղվածությունը՝ բարձրակարգ արժեքներից տեղաշարժ դեպի ցածրակարգ, հարմարվողական արժեքները կամ բարձրակարգ և ցածրակարգ արժեքների համագոյակցումը, որոշում են անձի սոցիալ-հոգեբանական հարմարման գործընթացի բնույթն ու հարմարվողականության առանձնահատկությունները:

Ենթադրվում է, որ ցածր սոցիալական կարգավիճակին հարմարումը, որն ընթանում է արժեքային ոլորտի վերակառուցմամբ, պայմանավորում է անձի հարմարվողականության առանձնահատկությունները: Բացասական միտվածությամբ արժեքային վերակառուցումները անձի հոգեբանական հարմարումն ապահովող հիմնական մեխանիզմներից են, որոնք չնայած պարզեցնում, աղքատացնում են նախկին մասնագետի արժեքային ոլորտը, բայց ապահովում են սոցիալ-հոգեբանական հարմարումը նոր, ոչ մասնագիտական գործունեության պայմաններում: Առաջանում է մասնագիտական հարմարման անհրաժեշտություն: Այս հասկացությունը բնորոշվում է իբրև երիտասարդի ներգրավում, մուտք մասնագիտական գործունեության ոլորտ, արտադրության համակարգ, աշխատանքային կոլեկտիվի, աշխատանքային պայմանների մեջ, հարմարում մասնագիտության առանձնահատկություններին: Այն ենթադրում է

ինքնանույնացում նոր դերի, կարգավիճակային բնութագրերի հետ և մասնագիտական միջավայրի մշակույթի և արժեքների ընդունում: Միջին տարիքում նոր աշխատանքային դաշտում սեփական տեղի որոնումը նոր, ավելի ցածր կարգավիճակի առկայությունը, անձից պահանջում է մասնագիտական վերակողմնորոշում, որի արդյունքը պետք է լինի անձի հարմարվածությունը: Այս առումով լավ հարմարված մարդկանց տարբերում է բարձր արդյունավետությունը կատարվող գործունեության մեջ, կյանքով ընդհանուր բավարարվածությունը, հոգեկան հավասարակշռությունը:

Ինչպիսին էլ լինեն մարդուն շրջապատող իրականության հետ կապված դժվարությունները կյանքի որոշակի ոլորտում (մասնագիտական, ընտանեկան, անձնական և այլն), նրա հարմարվողականության գնահատման միջոցով պատկերացում ենք կազմում դժվար իրավիճակը հաղթահարելու մարդու հնարավորությունների մասին: Հեղինակները առանձնացնում են հոգեբանական հարմարման հետևյալ տեսակները՝

- Ներքին. երբ տեղի է ունենում հոգեկանի գործառնական կառույցների, համակարգերի վերակառուցում՝ կենսագործունեության, միջավայրի փոփոխության դեպքում: Մարդու արտաքին վարքն ու գործունեությունը ձևափոխվում են միջավայրի պահանջներին, արտաքինից եկող պահանջներին համապատասխան: Տեղի է ունենում անձի ամբողջական, ընդհանրացված հարմարում:

- Արտաքին. վարքային հարմարվողական, երբ անձը ներքնապես, բովանդակային առումով չի վերակառուցվում, այլ պահպանում է իրեն, իր ինքնությունությունը:

- Խառը, երբ անձը մասնակիորեն վերակառուցվում է և համապատասխանեցվում է միջավայրի պահանջներին,

նրա արժեքներին, նորմերին, իսկ մասնակիորեն հարմարվում է գործիքային, վարքային ձևով՝ պահպանելով և իր «Ես»-ը, սեփական ինքնությունությունը, «ինքնությունը» [4;425]:

Ենթադրում ենք, որ ոչ մասնագիտական գործունեության պայմաններում նկատվում է հարմարման ներքին տեսակի գերակայություն, ինչը դրսևորվում է հարմարման արժեքների գերակայությամբ: Անձի գործունեությունը ուղղորդվում է նյութական բարեկեցության, առողջության, կայունության և այլ ցածրակարգ, հարմարման արժեքներով: Հարմարման խառը տեսակը մեծապես կապված է անձի մոտ խառը կամ միջանկյալ արժեքային համակարգի գերակայությամբ: Այս դեպքում անձի մոտ առկա է հարմարման ցածրակարգ և բարձակարգ, օրինակ՝ ստեղծագործելու մասնագիտական ինքնաիրացման և այլ բարձրակարգ ինչպես նաև ցածրակարգ արժեքների՝ փող, ապահովություն և այլն, համագոյակցման գործընթաց:

Մասնագիտական կարգավիճակի փոփոխությունը արտահայտող ելակետային ցուցիչ է հարմարվողականությունը, որն անձի խորքային ենթակառուցվածքներից է: Այն փաստում է անձի հոգեկանի հաջող կամ անհաջող գործառնության, նոր մասնագիտական դերի հաջող կամ անհաջող կատարման և ընդհանրապես կյանքի նոր պայմաններին անձի հարմարվածության մակարդակի մասին:

Հարմարվողականության հիմնախնդրով զբաղվել են Տ. Ա. Գոլուբելան, Ս. Տ. Պոսոխովան Ե. Ն. Կիսելնիկովան, Լ. Գ. Պոպովան, Ի. Վ. Ռոզովան, Ս. Վ. Չերառիկովան և այլք: Հարմարվողականությունը անձի անհատական-հոգեբանական հատկությունների համալիր է, որն ամրացած է նրա կառուցվածքում և արտահայտում են հարմարման նկատմամբ ընդհանուր ընդունակությունը (Ե. Ն. Կիսելնիկովա, Ա. Ա. Նալչաջյան, Լ. Ն. Սոբչիկ և այլն) [6]: Ա. Բ. Ռոզովյանը այն

բնորոշում է իբրև անձի ինտեգրատիվ հատկություն, որը բնութագրում է անձի հոգեբանական հարմարման մակարդակը [7]:

Մ. Ռոստովցևան նշում է, որ անհատական-անձնային մոտեցման տեսանկյունից՝ «հարմարվողականությունը» մեկնաբանվում է նաև իբրև անձնային հատկություն, որը որոշում է անձի ընդունակությունը հարմարման նկատմամբ և իբրև կենսական միջավայրին նրա հարմարվածության մակարդակ «հարմարվողականություն» հասկացությամբ հաճախ փոխարինում են «հարմարվածություն» հասկացությունը, որն արտահայտում է հարմարման գործընթացի արդյունավետությունը: Լ. Դ. Ստոլյարենկոն ճշմարտացիորեն նկատում է, որ հարմարվողականությունը իբրև անձի հիմնային հատկություն արտահայտում է սոցիալական միջավայրին անձի փաստացի հարմարվածության մակարդակը, ինչպես նաև նրա սոցիալական կարգավիճակի, ինքնագագացողության մակարդակը, սեփական անձով և կյանքով բավարարվածության կամ անբավարարվածության չափը [8, 74]:

Օ. Վ. Կուզնեցովան սահմանում է հարմարվողականությունը՝ իբրև ներքին (ներանձային) և արտաքին (վարքային) վերակառուցումների նկատմամբ ընդունակություն՝ ուղղված է միկրո և մակրո միջավայրերի հետ հավասարակշիռ հարաբերությունների պահպանմանը և վերականգնմանը՝ նրա բնութագրերի փոփոխության դեպքում: Այդ բաղադրիչներից որևէ մեկի գերակայումը հարմարվողականության անհատական կառուցվածքում որոշում է անձի տիպը, սոցիալական միջավայրի հետ անձի փոխազդեցության մեջ հարմարվողական մարտավարությունների ուղղվածությունը [9]: Մարդու կենսագործունեությունը ներառում է նրա կյանքի առանձին ոլորտներ՝ ընտանեկան, մասնագիտական ընկերական և այլն: Ըստ Ն. Ն. Կուլիմովայի՝ բարձր հարմար-

վողականության մակարդակը կյանքի մի ոլորտում (անձնական, ընտանեկան) չի նշանակում բարձր մակարդակ մեկ այլ ոլորտում (մասնագիտական): Կարող ենք ասել, որ մասնագիտական հարմարվողականության բարձր մակարդակը մեծապես որոշում է անձի կյանքի որակը, կյանքի բարեհարմարության զգացումը, ուստի այն բնորոշել ընդհանուր հարմարվողականությունը որոշող հիմնային ցուցիչ է [6]:

Մ. Վ. Ռոստովցևան ներմուծում է «սոցիալական հարմարվողականություն», հասկացությունը: Այն անձի և հասարակության հարաբերությունն է, նրա փոխադասմանավորված ուղղվածությունը հակասությունների լուծմանը, որոնք առաջանում են սոցիալականացման գործընթացում [10]: Սոցիալ-հոգեբանական հարմարվողականությունը սոցիալական հարմարվողականության տեսակ է: Այն լուծում է հակասությունները, որոնք առաջանում են ժամանակակից հասարակության կողմից անձին առաջադրվող պահանջների և սոցիալական իրականությանը երիտասարդների հոգեբանական հարմարման ռեսուրսների միջև: Հարմարվողական ռեսուրսներն են՝ դրդապատճառային ոլորտի առանձնահատկությունները, արժեքային ուղղվածությունը, հաղորդակցական հմտությունների զարգացման և հասարակության մեջ վարքի կարգավորման մակարդակը անձի սոցիալ-հոգեբանական ռեսուրսներ են, որոնք որոշում են հարմարվողականության ձևավորումը: Այն առավելագույնս դրսևորվում է կյանքի պրոբլեմային իրադրություններում:

Լ. Մ. Կուլպակովան նշում է, որ կյանքի պայմանների փոփոխությունը դժվարացնում է մարդուն կողմից առօրյա խնդիրների լուծումը, ինչը կարող է առաջ բերել հոգեկանում՝ դառնալով տարատեսակ անձնային փոփոխությունների պատճառ: Հարմարվողականությունը, ըստ նրա, արտահայտվում է երկու գործառնական ձևերում՝ անձնային

և սուբյեկտային: Առաջինը դրսևորվում է անձի սոցիոկոդմնորոշված ակտիվության մեջ, սոցիալական միջավայրի կողմից առաջադրված սոցիալական գործոններով, երկրորդը՝ պայմանավորվում է ներքին ակտիվությամբ: Այս երկու մակարդակները իրարից տարբերվում են «մարդ-միջավայր» համակարգում առաջ եկող հակասությունների լուծման դեպքում: Սուբյեկտային հարմարվողականությունը թույլ է տալիս պրոբլեմային իրադրություններում գործել ոչ թե ըստ որոշակի առաջադրված մոդելի, այլ գտնել սեփական լուծումը, ինչը ստեղծագործական ակտիվության արդյունք է: Այն դրսևորվում է անձի ինքնավար վարքում և միտված է հավասարակշռության ապահովմանը՝ կյանքի գրավչության և արժեքների պահպանմանը [11]: Այս բնութագիրը բնորոշ է ձկուն անձին, ով ունակ է վերանայել իր արժեքային համակարգը փոփոխվող, սոցիալական, մասնագիտական պայմաններում: Նման դեպքում նկատվում է վերահարմարման անհրաժեշտություն: Ընդ որում՝ հաջող վերահարմարման համար կարևոր է սուբյեկտի հարմարման ռեսուրսների առկայությունը: Ս. Լ. Սոլովյովան քննարկելով անձի ռեսուրսների խնդիրը, նշում է. «որոշակի ռեսուրսների պոտենցիալի առկայությունը ընդլայնում է անձի գործունեության դաշտը՝ դարձնելով ավելի հասանելի կյանքում նրա համար նշանակալի նպատակները: Ռեսուրսները կարծես բարձրացնում են մարդու արժեքը շրջապատողների աչքերում և ազդում են սեփական անձի մասին նրա պատկերացման վրա, դարձնում են նրան ավելի ուժեղ: «Անձնային ռեսուրս» հասկացության մեջ մտնում են հետևյալ հոգեբանական երևույթներ.

- անհատական հոգեբանական առանձնահատկություններ,
- սոցիալ-հոգեբանական ռեսուրսներ (փող, իշխանություն, սոցիալական աջակցություն և այլն),
- անձի հոգեբանական որակները,

որոնց առկայությունը թույլ է տալիս հաջողությամբ հաղթահարել սթրեսային, պրոբլեմային իրադրությունները»:

Կենսական տարածության ցանկացած փոփոխություն, օրինակ՝ մասնագիտական գործունեության, ընտանեկան կյանքի և այլն, Լ. Ի. Անցիֆիրովայի կարծիքով՝ չի ենթադրում ավտոմատ և կրկնվող հարմարվողական մարտավարությունների գործադրում, այլ մեծապես հիմնվում է անձի կենսական փորձի վրա և նրա առաջատար արժեքաիմաստային կոդմնորոշումների համակարգի վրա: Կյանքի ողջ փորձը, ինչպես նաև կանխատեսվող ապագան, ամրապնդվում է տեսություններում, նշանակությունների և իմաստների, համոզմունքների և արժեքների համակարգերի ձևով, որոնք են կարգավորում անձի ընկալումը և պատկերացումները, որոշում են արտաքին աշխարհի մեկնաբանությունը և նրանում սուբյեկտի գործողությունները: Յուրաքանչյուր անհատ ինքը կարող է փոխել սեփական անհատական տեսությունը, այն իմաստավորել, դարձնել ավելի իրատեսական [12]: Իհարկե, իրականության վերաիմաստավորումը դրանում հարմարվելու ուղիներից մեկն է:

Անձի հարմարման պոտենցիալի մասին պատկերացումը ներմուծել է Ա. Գ. Մակկլակովը, ով բնորոշում է իբրև մարդու անձնային հատկություն: Իրադրություններում, որոնք պահանջում են հարմարում, հարմարվողական ռեսուրսները մեծապես կախված են լինում անձի հոգեբանական հատկություններից. վերջիններս են որոշում օրգանիզմի ֆիզիոլոգիական հակազդումների կարգավորման հնարավորությունը: Որքան բարձր է անձի հարմարվողական կարողությունների մակարդակը, այնքան մեծ է հաջող հարմարման հնարավորությունը, այնքան մեծ է միջավայրի գործոնների դիապազոնը, որին անձը պետք է հարմարվի: Հեղինակի կարծիքով՝ անձի հարմարվողական պոտենցիալը կազմում է անձի հոգեբանական

առանձնահատկությունների ամբողջությունը, որի մեջ առանձնացնում է նյարդա-հոգեկան կայունությունը, որի զարգացման մարկարդակը ապահովում է սթրեսի նկատմամբ հանդուրժողականությունը (տոլեռանտությունը), անձի ինքնագնահատականը, որը ինքնակարգավորման միջուկն է և գործունեության պայմանների և սեփական հնարավորությունների ընկալման համարժեքության մակարդակը, սոցիալական աջակցության զգացողությունը, ինչը պայմանավորում է նշանակալիության զգացումը շրջապատողների համար, անձի կոնֆլիկտայինության մակարդակը, սոցիալական շփման փորձը: Իհարկե, այս հատկությունների համախմբի գնահատումը թույլ է տալիս հասկանալ և անել հետևություններ նոր պայմաններում անձի հոգեկան հավասարակշռության, միջավայրի հետ ներդաշնակ հարաբերակցության, ինչպես նաև ներհոգեկան բովանդակությունների, հատկապես ար-


ժեքաինաստային ոլորտի բնույթի մասին [13, 16-24]:

Հարմարվողական հնարավորությունների գնահատումը թույլ է տալիս կազմել պատկերացում ներկայիս պայմաններում, մասնագիտական դաշտի փոփոխության պայմաններում անձի կենսագործունեության որակի, կյանքի ընդհանուր բարեհարմարության մասին:

Հետազոտություններին մասնակցել են 40-60 տարեկան թվով 101 անձ, որ ունեն մասնագիտական որակավորում, բայց զբաղվում են ցածր որակավորմամբ ոչ մասնագիտական գործունեությամբ: Հարմարվողականությունը գնահատելու նպատակով կիրառվել է Ա. Գ. Մակլակովի, Ս.Վ. Չերմյանինի «Ադապտիվություն» բազմամակարդակ հարցարանը:

Ա. Գ. Մակլակովի, Ս.Վ. Չերմյանինի «Ադապտիվություն» բազմամակարդակ հարցարանի տվյալները՝ արտահայտված ստեններով.

Գծապատկեր 1



Հետազոտությունները բացահայտել են, որ մասնագիտությունը հարկադրաբար փոխած անձանց մոտ առկա է հարմարվողական կարողությունների ցածր մակարդակ (1-2 ստենների սահ-

մաններում): Տեսական հարմարումը ոչ մասնագիտական գործունեության ոլորտին, որն ընթանում է գերազանցապես արժեքային ոլորտի վերակառուցմամբ, մասնագիտական արժեքների ֆրուստ-

րացման՝ արդյունքում դրա աղքատացմամբ, հանգեցնում է հասուն անձի հարմարման ռեսուրսների թուլացմանը: Միջին տարիքում, որը մասնագիտական կայացման համար առավելագույն կարևոր շրջան է, մասնագիտության փոփոխությունը, մասնագիտության կորուստը ապրվում է սուր ձևով: Այս խնդիրը հոգեբանական դաշտից դուրս է գալիս ավելի լայն գոյաբանական ոլորտ, քանի որ շոշափում է անձի կյանքի հիմքերը, հասուն անձը կանգնում է աշխարհում իր իրական տեղը կորցնելու իրողության առջև: Վերահարմարման ելակետը անձի գործունեությունն է, իսկ ստեղծված պրոբլեմային իրադրությունից միակ կառուցողական ելքը՝ մասնագիտական վերակողմնորոշումն է:

Գիտական գրականության մեջ մասնագիտության փոփոխության հարցերին հիմնականում անդրադարձել են սոցիոլոգիայում, որտեղ կարևորվում են օբյեկտիվ գործոնները, որոնք պայմանավորում են անցումը մի մասնագիտությունից դեպի մյուսը՝ գիտատեխնիկական առաջընթացի ազդեցությունը, ինչպես նաև սոցիալ-տնտեսական պատճառները: Հասուն տարիքում մասնագիտական վերակողմնորոշման մասին հետազոտությունները սակավաթիվ են, իսկ հետազոտությունների մեծ մասը նվիրված է պատանեկան տարիքին, երբ մասնագիտության ընտրությունը անձի համար առավել արդիանական խնդիր է: Քիչ է ուսումնասիրված հասուն անձի մասնագիտական վերակողմնորոշման խնդիրը:

Մ. Ռատնիկովան, ով զբաղվում է հասուն տարիքի անձի մասնագիտական վերակողմնորոշման հարցերով, նշում է, որ նոր աշխատանքի առարկան յուրացնելու ջանքերը և նախկին մասնագիտությունից հեռացման հետ կապված հուզական ապրումները ունեն վառ արտահայտված անհատական բնույթ: Ըստ նրա՝ մասնագիտությունը փոխելու գործընթացում հասուն տարիքում հենման կետեր են՝

կյանքի փորձը, դժվար իրավիճակները ապրելու և պատասխանատու որոշումներ կայացնելու ունակությունը՝ հենվելով սեփական հնարավորությունների վրա, սոցիալական ակտիվությունը անձնային նպատակներ դնելու և դրանք ձեռք բերելու գործում: Ընդ որում, մասնագիտական վերակողմնորոշման գործընթացը մի կողմից կախված է այն հանգամանքից, թե արդյոք մասնագիտության փոփոխությունը կատարվում է կամավոր, թե հարկադրաբար, մյուս կողմից՝ անձի սոցիալական, մասնագիտական և անձնային փորձից, ով ապրում է նշանակալի իրադրություն և իրացնում է իր պոտենցյալը գործունեության մյուս տեսակ անցնելիս: Ընդ որում, բացահայտվել է, որ հասուն տարիքում մասնագիտությունը փոխելու առաջատար դրդապատճառ է նյութական վիճակի բարելավումը, բարձր սոցիալական կարգավիճակ ձեռք բերելը [14]:

Մեր հետազոտությունները փաստում են, որ ցածր հարմարվողականությունը, որը առկա է մասնագիտության փոփոխության (մասնագիտական կարգավիճակի անկման) պայմաններում ցույց է տալիս, որ հիրավի մասնագիտության հարկադիր փոփոխությունը սպառում է անձի համարման ռեսուրսները, ուստի հասուն տարիքի մասնագետի վերակողմնորոշումը ենթադրում է այդ գործընթացի կազակերպում, որում կարևորվում է ՀՀ զբաղվածության կենտրոններին կից հոգեբանական ծառայության գործունեության անհրաժեշտությունը: Մասնագիտական վերակողմնորոշումը ենթադրում է ինչպես զանազան հարցարանների, այնպես էլ հոգեբանական խորհրդատվության համալիր կիրառում, ինչը թույլ կտա արդյունավետ կազմակերպել անձի մասնագիտական վերակողմնորոշման գործընթացը՝ ուղղորդելով նրան դեպի այնպիսի աշխատանքային ոլորտ, որում հնարավորություն կունենա իրացնելու մասնագիտական պոտենցյալը:

ՊՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ն. Ռ. Հակոբյան Մարգինալության դրսևորման սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները փոխակերպվող հասարկություններում, Երևան 2006, էջ 122-134.
2. Крысько В.Т Социальная психология, Москва 2006, с. 107, 215.
3. Яницкий М. С. Адаптационный процесс: Психологические механизмы и закономерности динамики, учебное пособие, Кемерово, Кузбассвиздат 1999, с. 8-11.
4. Сластенин В. А., В. П. Каширин Психология и педагогика: учеб. Пособие для студ. Выс. Учеб. заведений/ Идательский центр «Академия», 2006, с. 173, 174.
5. Вихорев С. А. Практическая психология, обзор теоритических подходов, Псков 2006, с. 12-22.
6. Куимова Н. Н. К проблеме взаимосвязи социальной и профессиональной адаптации личности особенности развития адаптивности у младших подростков с задержкой психического развития на этапе из начальной в основную общеобразовательную школу. Автореферат Нижний Новгород – 2012.
7. Рогозян А.Б. к проблеме о взаимосвязи социальной и профессиональной адаптации личности, материалы международной заочной конференции Теория и практика современной психологии, КургГУ, Краснадар 2011.
8. Столяренко, Самыгин С.И.100 Экзаменационный ответов по психологии, Ростов на Дону, Изд. Центр «Март», 2001, с. 74.
9. Кузнецова О. В. Проблема индивидуальных различий в адаптивности личности, диссертация на соискание ученой степени кандидата психологических наук, Нижний Новгород 2012.
10. Ростовцева М. В. Адаптивность как отношения личности и общества, Красноярск 2010.
11. Колпакова В.М Психология адаптивности к трудной ситуации, автореферат диссертации на соискание уч. степени док. псих. наук, Казань 2011.
12. Соловьева С.Л. Ресурсы личности. [Электронный ресурс] // Медицинская психология в России: электрон. науч. журн. 2010. N 2.
13. Маклаков А. Г. Личностный адаптационный потенциал: его мобилизация и прогнозирование в экстремальных условиях // Психологический журнал. – 2001. – Т. 22. – № 1. – с. 16-24.
14. Ратникова М. А. Исследование психологических особенностей профессиональной переориентации в зрелом возрасте, автореферат на соиск, канд псих, наук, Москва 1999.

АДАПТИВНОСТЬ ЛИЧНОСТИ И ТЕНДЕНЦИИ ПРОФЕССИОНАЛЬНОЙ ПЕРЕОРИЕНТАЦИИ В УСЛОВИЯХ ИЗМЕНЕНИЯ ПРОФЕССИИ

АКОПЯН НАИРА

*Профессор армянского государственного педагогического университета
им. Хачатуря Абовяна, доктор психологических наук*

ВАРДАНЯН СЕДА

Преподаватель университета практической психологии и социологии “Урарту”

В статье обсуждается проблема адаптивности личности при изменении профессии (снижение социального статуса в результате направленной вниз социальной мобильности), которая характеризуется фрустрированием профессиональных ценностей и доминированием ценностей адаптации. В результате упрощения ценностной сферы прежнего специалиста обнаруживается низкий уровень адаптивности. Поэтому одним из способов реадаптации взрослой личности является эффективная организация профессиональной переориентации, что предполагает не только психологический настрой личности, но и социальную поддержку.

THE HUMAN'S ADAPTABILITY IN THE CONDITIONS OF PROFESSIONAL STATUS CHANGING AND TENDENCIES OF PROFESSIONAL REORIENTATION

NAIRA HAKOBYAN

*Professor of Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan,
Doctor of Psychological Sciences*

SEDA VARDANYAN

Lecturer of Urartu University of Practical Psychology and Sociology

In this article is presented the professional status change, lowering in the condition of low social mobility, the problem of human's adaptability which takes place with the propfessional values frustration and with the majority of adapting values. In the result of poor values system is shown a very low level of adaptability. So the ways of readapting is the professional reorination wich also needs a social care besides a psychological wish.